

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ հոգեբանի (ծածկագիր՝ 93-30.2-Մ3-1) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար (մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ)

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ հոգեբանը (ծածկագիր՝ 93-30.2-Մ3-1).

1. մասնակցում է գենդերային քաղաքականության համակարգման լիազոր մարմինն ներկայացնելու նպատակով գենդերային հիմնահարցերի լուծմանն ուղղված աշխատանքների մասին տարեկան հաշվետվության կազմման աշխատանքներին.
2. աշխատանքներ է իրականացնում իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության մարզային վարչության (այսուհետ՝ Ոստիկանություն) համապատասխան ծառայությունների հետ համատեղ.
3. իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների ավտոմատացված «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարում.
4. մասնակցում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկման աշխատանքներին՝ երեխայի լավագույն շահը պաշտպանելու նպատակով.
5. մասնակցում է ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում առկա տարաձայնությունների լուծման աշխատանքներին՝ հաշվի առնելով երեխայի շահերը.
6. մասնակցում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի հետ կապված հատուկ դեպքերը, ինչպես նաև դատական այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի իրավունքներն ու շահերը.
7. մասնակցում է Ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրների քննարկումներին, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է համապատասխան հաստատություններ, պաշտպանում է անչափահասների իրավունքներն ու շահերը.
8. իրականացնում է Աշխատակազմ հասցեագրված քաղաքացիների դիմումների, բողոքների քննարկումը և լուծում է դրանց ընթացքը օրենքով սահմանված կարգով:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

1	Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
2	Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
3	Ենթաօլորտ	Հոգեբանություն
4	Մասնագիտություն	հոգեբանություն

- Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
- Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ սոցիալական բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները

1. Բանակցությունների վարում
2. Կոնֆլիկտների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

Քաղաքացիական ծառայության որոշակի ժամկետով թափուր պաշտոն առաջանալու հիմքը վերանում է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողի վերադարձի օրը:

Աշխատավարձը՝ 221.312 (երկու հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր տասներկու) ՀՀ դրամ:

- Աշխատավայրի հասցեն է՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ, ք. Արմավիր, Աբովյան 71)
- Ժամանակավոր թափուր պաշտոնում ընտրությունը կատարվելու է դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության եղանակով.

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 17:00-ը՝ մինչև **2024 թվականի հունիսի 12-ը ներառյալ**, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- անձնագիր (և անձնագրի պատճեն).
- Դիմում
- Ինքնակենսագրություն
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին.
- արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի.

Դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել անձամբ կամ armavir.kadrer@mta.gov.am կամ armavir.andznakazmi.karavarum@gmail.com էլեկտրոնային փոստի միջոցով:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին (ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 023721629):